

Յուզիչ են Գերույ. Պօղոս Թէրզեան՝ Աւանայի Եպիսկոպոսին ֆրանսերէն՝ և Հ. Ա. Տիրոյեանի իտալերէն լեզուներով կոչերը: Պատմական կարեւորութիւն ունին Հ. Ազերեանի «La Cilicie au moyen-âge» և (Թ. Օհանեանի), «Adana l'Egypte de demain» յօդուածները: Հաճոյքով կը տեսնենք Հ. Ա. Տիրոյեանէն Տասույի «Երուսաղէմ Ազատեալ» չափով թարգմանութիւնը: Հետաքրքրական է «Deux Arméniens, maîtres de l'Italie» Հ. Թ. Ազեանի յօդուածը: Բացի շարք մը բանաստեղծութիւններէ՝ կ'աշխատակցին նաև Գամ. Ֆլամմարիոն նշախառնակցին: Իսկուհի Մինաս հայ գրագիրուհին՝ ֆրանսերէն լեզուով նորավէպով մը. Պրոֆ. Տեզա, Պոհեմ և Մանառ քնարական բանաստեղծութեան թարգմանութիւնամբ նմոյշներ տալով: Սակայն զմեզ Բատուացիներու ամենէն շատ հետաքրքրողն է Հ. Անդրիկեանի «La Chûte des Anges» ուսումնասիրական յօդուածը:

Ուշադրութիւննիս կը գրաւէ մեր ողբացեալ Աղանուր մեծ քերթողուհւոյս համառօտ մէկ նամակը, որով կը ցաւի քնարականով մը չի կարենալ մասնակցիլ «Գեղունի»ին, և իր սիրոյ և համակրութեան ողջոյները իր արեւակից հայ որդիներուն կը զրկէ:

Վերջապէս անկարելի է ամէն կարեւոր յօդուածներու վրայ խօսիլ. կը բաւականանաւ ըսելով որ Գեղունի 120 և աւելի պատկերներով շքեղացած է. նշանաւոր են մէջի գունաւոր պատկերները, կան նաև վեհապետներու և երեւելի անձինքներու և Հայ դատին նահատակներու պատկերներ: Մենք չենք կրնար ուրիշ բան ընել, եթէ ոչ ուրախակցութիւննիս յայտնել Հայ Հայրերուն՝ այդ բարեգործական հրատարակութեան համար, որ գերազանցօրէն յաջողած է. մաղթելով միանգամայն որ իրենց ջանքերը պտղաբերին, և թէ իրենց վշտի կոչը արձագանգ տայ իտալացւոց մէջ՝ որ ուրիշ ազգերէն աւելի կը սիրեն Հայրենիքը և կը բնակին այն գեղեցիկ

երկիրը՝ որ աւելի նմանութիւն ունի Արևելքի բարեբեր երկիրներուն, և յանուն Հոռովմայ՝ սրբազան պարտքը ունին բարձր պահել պատիւը և խնամել քաղաքակրթութիւնը:

RICARDO D. T.

Libertà-Ազատութիւն. (Բատուայի օրաթերթ)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

— . . . —

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐՆԵՐ

Հ. Վարդան չափումի. Ժամահար և զանգակ (հախօսական)	198
Հ. Ա. Վ. Տիրոյեան. — Կարգինալ Բոնա և Հայեր	203
Հ. Մ. Պոտուրեան — Թաթու Թաթաթիցի (Միջնադարեան բանաստեղծ)	207
Տիգրան Զիթումի. — «Բնագնութիւն»	209

ԳՐԱԿԱՆՔ

Գուլիֆոյ Զիվիքիմի. — Թեսաղոյոյ շուրջ. Մէտերայք, Ս. Ստեփանոսի վանքը (Թրգմ. Յ. Լ. Ա.)	213
Արսէմ-Երկաթ. — Կարաւանը (պանդուխտ եղբայրներու)	217
Տիգրան Զիթումի. — Սոխակին մահը	218
Հ. Մ. Պոտուրեան. — Հարբէյթի զոհը	219
Վերգիլիոսի «Ենէակներն» — Պատերազմ Հռուսուլներուն դէմ են. Թրգ. Հ. Ա. Ղազիկեան	225
Hello. — Յանդուլ մարդ մը (Թրգմ. Ա. Վ. Սիրունեան)	231
Հ. Ղ. Մ. Ալիշան. — Օրագիր առժամայն ազգամանց մասց և սրտի 1843.	234
Միլլի Բրիտտոմ. — Միծեռնակ (Թրգմ. Ստ. Եազըճեան)	235
Արամ Սրապիան. — Կը հաստատ	236
Գիմ-Այք. — Միջառի մը մահը	237
Հ. Ղ. Տայեան. — Գեղունիին և Մ. Պարոտ	238

ԱՅԺՄԵՒԱԿԱՆՔ

Հ. Մ. Պոտուրեան. — Գեր. Պօղոս Թէրզեան Կ-Պատրիարք Տանն Կիլիկիոյ. — Օսմանեան պատերազմութիւնն ի Ս. Ղազար. — Վիկարիա Աղանուր Բոմբէի	241
Արսէմ Երկաթ. — Վիկարիա Աղանուր յիշատակին. Վերջին նամակը — Արցունքներու	247
Է. Տեզա. — Ս. Ղազարու ազնիւ բարեկամներու (Թրգմ. Գ. Ա.)	250
Հ. Մ. Պոտուրեան. — Յորեկներն. Պրոֆ. Տեզայի խնամակը — Ա. Մատուրեանի շնորհակալ	251
Gazzeta di Venezia, Libertà. — «Գեղունի»	254